

# Ժողովուրդ

14 հունվարի երեքշաբթի 2025  
տպագրության ԺՂ տարի

1  
(3032)

Է. Երեւան, Արմավյան 22ա/3 (0010)

+ 374 10 546423

info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

## «ՄԵՂԱՎՈՐԴ» Է ՓԱՅՏԱՆՅՈՒԹԻ ԲԻԶՆԵՍԻ ԸՆԾԱՐԹՅՈՒՆԻ ԴՆՏԱՐԿՈՒԹՅԱՆ ԸՄՄԱՐ



Իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը շարունակում են ուղեկցել սկանդալները: Կուսակցության ներսից «Ժողովուրդ» օրաթերթին արտահոսք ապահովեցին այն մասին, որ Հայկ Սարգսյանը, որ երեք նիստի ժամանակ է՝ խոսում է անտառների ոչնչացման թեմայից, իրականում փայտանյութ ներկրողների հետ բիզնես հետաքրքրություններ է ձեռնարկել:

Հիշեցնենք, որ Հունվարի 9-ի երեկոյան ՔՊ-ական պատգամավոր Հայկ Սարգսյանը դարձյալ ծառահատումների մասով սուր ելույթ է ունեցել ու մեղադրել մարզպետ Հայկ Ղալումյանին՝ Տավուշի անտառները ոչնչացնելու համար: Սա դարձել էր փոխադարձ վիրավորանքների ու քաջքռուկի պատճառ:

ArmLur.am-ի տեղեկություններով՝ ՔՊ-ականներն անգամ իրար հարվածել էին հենց Նիկոլ Փաշինյանի ներկայությամբ, եւ վերջինս էլ թողել ու հեռացել էր: Վեճին միջամտել էին ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը՝ փորձելով հանգստացնել Հայկ Սարգսյանին ու Ղալումյանին: Այս միջադեպից հետո ՔՊ որոշ շրջանակներ «Ժողովուրդ» օրաթերթին փոխանցեցին, որ Հայկ Սարգսյանը ոչ թե անտառների ճակատագրով է մտահոգված, այլ փայտանյութ ներկրող քրեական աշխարհի որոշ ներկայացուցիչների հետ որոշակի հարաբերություններ է կառուցել:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս առիթով գրուցել պատգամավոր Սարգսյանի հետ, սակայն վերջինս որեւէ կերպ կապի դուրս չեկավ մեզ հետ:

Կապվեցինք նրա հոր՝ Զարեհ Սարգսյանի հետ՝ հետաքրքրվելով այն մասին, որ ՔՊ-ականները պատմել են մեզ, որ փայտ ներկրողները, որոնք քրեական աշխարհի հետ կապ ունեն, իր որդու հետ «բիզնես գործընկերներ են», ու իր որդին քրեական աշխարհի հետ կապ ունեցող փայտ ներկրողներին խոստացել է այնպես անել, որ Հայաստանում փայտ չհատվի, որպեսզի ներկրված փայտը վաճառվի:

Զարեհ Սարգսյանը, ի պատասխան այս մեղադրանքների, ասաց. «Հայկը երկրում չէ, նախապես պլանավորված հանդիպում կար, մեկնել է: Այս ինչ տեղեկություններ են, ծիծաղել կարելի է: Կա՞ մեկը Հայաստանում, որ կուզենա ապօրինի ծառահատումներ լինեն, հարց եմ տալիս: Եթե Հայկը տեղեկություններ ունի ապօրինի ծառահատումների վերաբերյալ, իրեն ոչ ոք ու ոչ մի բան չի կաշկանդի այդ մասին բարձրաձայնել: Հայկը նաեւ հրապարակալից հայտարարություններ է արել՝ քրեական հեղինակությունների եւ քրեական ենթամշակույթ կրող անձանց դեմ պայքարելու նպատակով ստեղծված օրենսդրության պահանջների կատարման անհրաժեշտության մասին, այդ մասին բարձրաձայն ՆԳՆ նախարարին հարց է ուղղել, ո՞նց եք պատկերացնում՝ նա գողականների հետ ընկերություն է անում ու հրապարակավ նրանց դեմ պայքարի մասին խոսում: Ձեզ հասած տեղեկությունները լոգիկա չունեն»:


Նիկոլ Փաշինյանը իր ձեռքով հերոսացրած պաշտոնյաներին մեկիկ-մեկիկ մեղադրյալ ու կորուստներ է դարձնում: Հերոսից մինչեւ մեղադրյալ այս էպոպեան սկսվեց նախ արտակարգ իրավիճակների նախարար Անդրանիկ Փիլոյանից: Վերջինս 2020 թվականի հոկտեմբերին՝ 44-օրյա պատերազմի ընթացքում, բանակային կորպուսներից մեկի հրամանատար եղած ժամանակ ազգային հերոսի կոչում էր ստացել Նիկոլ Փաշինյանի կողմից: Պատերազմից հետո նշանակվել էր արտակարգ իրավիճակների նախարար: Հերոսացումից ընդամենը 2 տարի անց՝ 2022 թվականի մարտին, Փիլոյանը կալանավորվեց՝ կաշառք ստանալու եւ պաշտոնական դիրքը չարաշահելու մեղադրանքով: Հաջորդ «մեղադրյալ-հերոսը» ԳՇ պետի նախկին առաջին տեղակալ Տիրան Խաչատրյանն է: 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում Ազգային հերոսի կոչում ստացած Տիրան Խաչատրյանին մեղադրանք է առաջադրվել այդ նույն պատերազմին առնչվող գործով: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել ՀՀ վարչապետի մամուլի քարտուղար Նազելի Բաղդասարյանին՝ խնդրելով պատասխանել հետեւյալ հարցերին. «...Ինչո՞ւ այսքան տարի հետո նոր նրան մեղադրանք առաջադրվեց, ի՞նչ է պարզվել: Ի՞նչ հիմքով են հերոսի կոչում շնորհել նրան: Արդյոք հերոսի կոչումը հետ կկանչվի»: Մեր այս հարցերին թերի պատասխաններ են եկել վարչապետի աշխատակազմից. «Ի պատասխան Ձեր հարցման՝ տեղեկացնում ենք, որ Տիրան Խաչատրյանին ազգային հերոսի կոչում է տրվել ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետի միջնորդությամբ»:



Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան, ի դեմս ֆեդերացիայի նախագահ Արմեն Մելիքբեկյանի, արդեն դադարում է հետաքրքրել ֆուտբոլատերներին ու ֆուտբոլային աշխարհին: Մելիքբեկյանի ու ֆեդերացիայի իրական ղեկավար համարվող Արմեն Նիկողոսյանի դեմ դուրս եկան ակումբներ, ֆանատական շարժումներ, ու բոլորին պարզ է, որ եթե մինչեւ խորհրդարանական առաջիկա ընտրություններ այս մարդիկ չհեռանան ֆեդերացիայից, ապա նրանց հովանավոր Նիկոլ Փաշինյանը կկորցնի տասնյակ հազարավոր ձայներ սպասվող ընտրություններում: Արմեն Մելիքբեկյանին ընդդիմությունը թերեւս վերջում պարզեատարի Փաշինյանի դեմ հազարավոր ձայներ ապահովելու համար. իսկ մինչ այդ արձանագրենք, որ ՀՀ ֆուտբոլի ղեկավարության օրոք ֆուտբոլից դուրս եկավ հերթական ներդրողներից ռուսաստանաբնակ գործարար ու Երեւանի «Փյունիկ» ակումբի սեփականատեր Արթուր Սողոմոնյանը, ով տեսական ժամանակ է, ինչ քննադատում է ՀՀ ֆուտբոլի ղեկավարությանը՝ մեղադրելով վերջիններիս ընդհուպ մինչեւ կորուստի մոտեցող գործողությունների, բուքմեյքերական ընկերությունների հետ աշխատելու, հայկական ֆուտբոլում աննախադեպ նախաձեռնություններով ու բազմաթիվ այլ մեղքերի համար: Սողոմոնյանի, ինչպես նաեւ նրանից առաջ ֆուտբոլը լքած ակումբների սեփականատերերից եւ ոչ մեկի հետ իշխանությունը կապի դուրս չեկավ ու չհորձեց նույնիսկ կարգավորել խնդիրները, ինչը նշանակում է թեքած ունենալ խաղի միլիոնավոր սիրահարների ու հայկական ֆուտբոլի ապագայի վրա: Ինչ վերաբերում է ՀՀ ֆուտբոլի «գրանցած հաղթանակին», ապա խոսքն ուրբաթ օրն իրենց կողմից տարածված լուրի մասին է, իբրեւ թե դատարանը պարտավորեցրել է «Փյունիկ» նախկին սեփականատեր Արթուր Սողոմոնյանին վճարել 800 հզ դրամ գումար:



«Տեխնոտուն» ընկերությունը եւ Ֆրանսիական Accor-ի Pullman բրենդը ներդրումային ծրագիր են իրականացնում Երեւանում՝ ավելի քան 100 մլն ԱՄՆ դոլար բյուջեով: Թվում է՝ շատ լավ ծրագիր է, գովելի ներդրում, բայց ողջ խնդիրն այն է, որ նրանց հատկացվել է մի հողատարածք, որը Հայաստանի մայրաքաղաքի միակ մանկական առողջարանն էր: Էլ չունենք: Հիմա՛ ամեն ինչի մասին հերթով: Տարիներ շարունակ Նորքի Այգիներ 180 հասցեում գործել է Երեւանի միակ մանկական առողջարանը, եւ պարզվում է՝ այն վերածվելու է բնակելի շենքի, հյուրանոցի, բայց ոչ մի խոսք՝ մանկական առողջարանային հատվածի մասին: «Ժողովուրդ» օրաթերթի նկարահանող խումբը եղավ այդ հասցեում: Նկատենք, որ տարածքում այնքան էլ բարյացակամ չէին՝ մեզ հետ խոսելու: Դռները փակեցին մեզ վրա: Երբ եւ ում կողմից է սեփականաշնորհվել մանկական միակ առողջարանը. «Ժողովուրդ» օրաթերթի հարցերին ի պատասխան՝ Երեւանի քաղաքապետարանը պատասխանատվությունը դրեց Պետական գույքի կոմիտեի կառավարման վրա, իսկ նրանք էլ դեռ չեն պատասխանել (կներկայացնենք ստանալուն պես): Բաց արքայությունից պարզեցինք, որ այդ տարածքում շինարարություն սկսած «Տեխնոտուն» ՍՊԸ-ն գրանցված է Արամ Մուրադյանի, Արտաշես Հակոբյանի, Գագիկ Աղավեսյանի եւ Ռոբերտ Հակոբյանի անուններով, վերջին երկուսը դուրս են եկել կառավարումից, հիմա հավասարապես բաժնետեր են առաջինները՝ մեկը գրանցված Քանաքեռ-Զեյթունում, մյուսը՝ Արաբկիր համայնքներում: **Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:**







ՄԱՆՐԱՄԱՆԵՐ

ԵՌԱԲԼՈՒՐԻՑ ԾԱՂԻԿՆԵՐ ԳՈՂԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾԸ

2025 թվականի հունվարի 4-ին ՀՀ Բնակավայրերի կոմիտեի գինվորական Բնակավայրերի գլխավոր վարչության չորրորդ կայազորային Բնակավայրի բաժնում նախաձեռնված Բնակավայրի վարչության նախաձեռնությամբ առերեսությամբ փաստական սվյալներ են ձեռք բերվել, որ 2025 թվականի հունվարի 2-ին Ա.Կ.-ն մի խումբ անձանց հետ կազմակերպելու դեպքում է եռաբլուր ղազախում հուղարկվող Երկու զոհված զինծառայողների գերեզմանների վերջիններս ծնողների կողմից դրված ծաղիկների հափճակությունը, որից հետո վերջիններս զոհացված ծաղիկները վաճառել են Երևան Բաղաբի Հյուսիսային զոհոսայում՝ մեկ հասք 500-ից 1.000 ՀՀ դրամ արժեքով:



Նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու մասին: Ա.Կ.-ի եւ Ա.Պ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը 2 ամսով, իսկ Ա.Կ.-ի նկատմամբ կիրառվել է վարչական հսկողությունը: Նախաքննությունը շարունակվում է: Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ,

քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Նշյալ ավելի վաղ ArmLur.am-ը հայտնել էր, որ Եռաբլուրում գինվորների շիրմարկի ծաղիկները հափշտակողներին տրեկու անձ կալանավորվել է: Ինչպես հայտնի էր դարձել ArmLur.am-ին, նրանք հայտնել էին, որ Եռաբլուրում փնտրել են թարմ ծաղիկներ, գողացել են դրանք, տարել ու վաճառել են ծաղիկի խանութներին, որ գումար աշխատեն: ԸՆՍՈՒԿԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ԶՐՈՆԻԿՈՆ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԳԵՊՔԵՐԻ «ԿԵՆՏՐՈՆԸ»

2024 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսների դրությամբ ՀՀ-ում տեղի ունեցած հանցագործությունների թիվը կազմել է 31.320: Հետաքրքիր է, թե ՀՀ-ի մարզերում են եղել ամենաշատ հանցագործության դեպքերը: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է այն 3 մարզերը, որտեղ հանցագործության ամենաշատ դեպքերն են գրանցվել: «Ժողովուրդ» օրաթերթը ներկայացնում է այն 3 մարզերը, որտեղ հանցագործության ամենաշատ դեպքերն են գրանցվել: Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ ՀՀ Արմավիրի մարզում 2024 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին գրանցվել է 2677 դեպք, որից ոչ մեծ ծանրության են 1527-ը: Գրանցված հանցագործության դեպքերից միջին ծանրության են 725-ը, ծանր՝ 364-ը եւ առանձնապես ծանր՝ 61-ը: ՀՀ Կոտայքի մարզում 2024 թվականի հունվար-հոկտեմբեր ամիսներին գրանցվել է հանցագործության 2589 դեպք, որից 1508-ը՝ ոչ մեծ ծանրության, 800-ը՝ միջին ծանրության, 251-ը՝ ծանր, իսկ 30-ը՝ առանձնապես ծանր: Շիրակի մարզում եւս գրանցվել են հանցագործության դեպքեր, որոնք կազմել են 2283-ը: Գրանցված հանցագործություններից 1154-ը ոչ մեծ ծանրության են, 676-ը՝ միջին ծանրության, 390-ը՝ ծանր, իսկ 63-ը՝ առանձնապես ծանր:

2024 ԹՎԱԿԱՆԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Հանցագործությունների դեպքեր գրանցվում են գրեթե ամեն օր, իսկ տարեկան կտրվածքով հանցագործության դեպքերն ավելի են տասնյակներից: «Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, թե 2024 թվականի հունվարից մինչև հոկտեմբեր ամիսներին հանցագործության քանի դեպքեր են գրանցվել: Մինչ վիճակագրությունը ներկայացնելը նշենք, որ, ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ 2024-ին հանցագործության դեպքերն ավելի քան են եղել, քան 2023-ին: Այսպիսով՝ 2024-ի հունվար-հոկտեմբեր ամիսներին գրանցվել է հանցագործության ընդհանուր 31.320 դեպք: 31.320 հանցագործության դեպքից ոչ մեծ ծանրության են 15.044-ը, ինչը ավելի շատ է նախորդ՝ 2023 թվականի հետ համեմատած: Միջին ծանրության հանցագործությունների թիվը 2024-ին եղել է 10.518-ը, ծանր հանցագործություններինը՝ 4313-ը: Առանձնապես ծանր հանցագործության

դեպքեր 2024-ին եւս գրանցվել են եւ համեմատելով նախորդ տարվա հետ՝ դրանք ավելի շատ են: 2023-ին առանձնապես ծանր հանցագործության դեպքերը եղել են 1425-ը, իսկ 2024-ին՝ 1445-ը: Հանցագործությունների ընդհանուր քանակից 94 դեպքը կատարվել է հրազենի, ռազմամթերքի գործադրմամբ: Նյութերը՝ ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆԻ

ՆՈՐ ԳԵՂՈՒԲ ՏՂԱՄԱՐԳՈՒ ՄԱՐՄԻՆ Է ԳՏՆՎԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ Ե. Շ.-ն Կոտայքի մարզի Նոր Գեղի գ. Բանավան թաղամասի Ամառանցային 1-ին փողոցում վիճաբանել է փոխադարձ հարվածներ է հասցրել Ա. Վ.-ին: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել, որ վիճաբանությունը այնքան է թեթևացել, որ Ե. Շ.-ն տանը գտնվող խահանգային դանակով հարվածել է Ա. Վ.-ին, ինչի հետեւանքով վերջինս մահացել է: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ նաեւ, որ Ե. Շ.-ն ձերբակալվել է: ԸՆՍՈՒԿԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՎՃԻՌ Է ԿԱՅԱՑՎԵԼ

Ինչպես հայտնի է, 2024 թվականին ՆԳՆ-ն հայտնել էր, որ Երեւանի Պուշկինի փողոցի շենքերից մեկին պատկերված 44-օրյա պատերազմի մասնակիցների դիմանկարները պղծած կնոջը ձերբակալել են: Խուլիգանություն կատարելու կասկածանքով բերման է ենթարկվել Երեւանի բնակիչ, 61-ամյա Հասմիկ Գ.-ն: Ձերբակալվածը եւ կազմված փաստաթղթերը կներկայացվեն Քննչական կոմիտե: 61-ամյա Հասմիկ Գրիգորյանը, որ Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանի նախկին դասախոս է: Ավելի վաղ «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, թե Պուշկինի 43 հասցեում գինվորների նկարները պղծած կնոջ ինչ է պատմել իրավապահներին, ինչու է գնացել այդ քայլին: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նա իրավապահներին խոստովանել է, որ անձամբ ինքն է գնացել այդ քայլին: Նա պատմել էր, որ ամեն օր անցնում է Պուշկինի 43 հասցեի տարածքում ու մշտապես տեսնում այդ նկարները: Իրեն զայրացրել է, որ խոսում են մաքուր Երեւանի մասին, ու որոշել է 44-օրյա պատերազմի գինվորների նկարների կողքի գրառումները մաքրել ու այդ պահին նաեւ նրանց նկարներն է մաքրել: Եվ ահա այս քրեական գործը ուղարկվել էր դատարան, ու դատարանը վճիռ է կայացրել Հասմիկ Վարդգեսի Գրիգորյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքում եւ պատիժ նշանակել տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հնգապատիկի՝ 375.000 /երեք հարյուր յոթանասունհինգ հազար/ ՀՀ դրամի, չափով: Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո, որպես արտավարության փաստաթուղթ ապացույց ճանաչված եւ քրեական վարույթին կցված լազերային սկավառակը պահել գործի հետ միասին՝ վերջինիս պահելու ամբողջ ժամանակամիջոցում: Դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո Հասմիկ Վարդգեսի Գրիգորյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ բացակայելու արգելք է դրանով պայմանավորված սահմանափակումները, վերացնել: ԶԱՐԱԳԱՐԵԼ Է ԼՐԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկացնում են, որ դատախազը 2024 թվականի դեկտեմբերի 27-ին Հակակոռուպցիոն դատարան է հանձնել Արագածոտնի մարզի Արտաշակյան համայնքի նախկին ղեկավարի կողմից պաշտոնեական լիազորությունները չարաշահելու եւ պաշտոնեական կեղծիք կատարելու վերաբերյալ վարույթի նյութերը: «Դատախազը 2024 թվականի դեկտեմբերի 16-ին համայնքի նախկին ղեկավարի նկատմամբ հարուցել էր հանրային քրեական հետապնդում: Հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 18-ի վճռով Դատախազության հայցը բավարարվել է մասնակի: Իսկ քրեական վարույթով ձեռք բերված նոր հանգամանքներով պայմանավորված՝ Դատախազությունն առաջիկայում մյուս՝ 33.4719 հա մակերեսով հողամասը համայնքին վերադարձնելու վերաբերյալ նոր հայց կներկայացնի Հակակոռուպցիոն դատարան», - ասված է հարդրագրության մեջ:

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 9-ից 10-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 136 դեպք, որից 6-ը՝ նախկինում կատարված:









**ԿԱՐԳ**

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ավտոապահովագրողների բյուրոն ո՞ր դեղին է հասուցում տուժած անձանց դատառված վնասները:**  
Վազգեն Սաֆարյան (42 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Վ. Սաֆարյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է տուժած անձանց պատճառված վնասները, եթե՝

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է: Այս դեպքում Բյուրոն Երաշխավորման ֆոնդի միջոցների հաշվին հատուցում է միայն տուժած անձանց պատճառված անձնական վնասները:
- Վնասը պատճառվել է այն ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ, որի վերաբերյալ կնքված չէ ԱՊՊԱ պայմանագիր:
- Վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ:
- Վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ), եթե նա, օրենքի համաձայն, պարտավոր էր հատուցել պատճառված վնասը:

**Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Նշենք, որ Երաշխավորման ֆոնդը գոյանում է Բյուրոյի անդամների կողմից կատարվող միանվագ, պարբերական եւ լրացուցիչ վճարներից, օրենքով սահմանված այլ ձեւերով ներդրված միջոցներից, ինչպես նաեւ այն ակտիվներից, որոնցում ներդրվել են դրանք, եւ դրանց կառավարման արդյունքում ստացված եկամուտներից: Երաշխավորման ֆոնդի միջոցները սեփականության իրավունքով պատկանում են Բյուրոյին: Դրանք կարող են օգտագործվել բացառապես Երաշխավորման ֆոնդի համար օրենքով սահմանված նպատակներով եւ դեպքերում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

**ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես է որոշվում բնակելի սարածության անհասույց օգտագործման իրավունքի՝ դասական կարգով դադարեցման դեղինում սեփականատիրոջ կողմից վճարվող փոխհատուցման չափը:**

Սեյրան Սկրտչյան (43 տարեկան)



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ փոխհատուցման չափը մեկ ամսվա համար սահմանվում է իրավունքի դադարեցման պահին տվյալ բնակելի տարածության համար կիրառելի վարձավճարի չափից՝ հաշվարկված հետեւյալ կերպ. յուրաքանչյուր բնակչության իրավունք գրանցած անձի համար՝ բնակելի մակերեսի չափը բնակելի տարածության անհասույց օգտագործման իրավունք ունեցող անձանց եւ սեփականատերերի ընդհանուր թվի վրա բաժանելու միջոցով ստացված մակերեսը, սակայն ոչ պակաս 5 քառակուսի մետրից եւ ոչ ավելի, քան 9 քառակուսի մետրը: Փոխհատուցումը հաշվարկվում է երեք տարվա համար եւ տրամադրվում է միանգամից, եթե կողմերի համաձայնությամբ այլ բան նախատեսված չէ: (Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 225-րդ հոդված):

**Կարաստրի կոմիտե**

**«ԺՈՂՎՈՒՐԳ».** Գրավ դրված բնակելի տան կամ բնակարանի վրա բռնագանձում տարածելուց եւ այդ գույքն իրացնելուց հետո գրավատուն ու բնակելի տարածության օգտագործման իրավունք ունեցող անձինք տան (բնակարանի) սեփականատիրոջ պահանջով պարտավոր են ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում ազատել զբաղեցրած բնակելի տարածությունը:

**ԼՈՒՐ ԿԱՐԴ**

Լուսանկարը՝ համացանցից



Կարծես թե տոնական օրերը այնքան հետաքրքիր ու թեժ են անցել այստեղ, որ սրճարանի տերերը որոշել են նման «նախագուշացնող» պատահա փակցնել դիմապակուն:

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Մեր թերթը  
Բաժանորդագրվելու  
համար կարող եք դիմել



**«Հայկոստ» ՊՓԲԸ**  
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**  
հեռ. 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

**ԱՌԱՋԱՐԿ**  
**հայկական տպագիր մամուլից**

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

**Բաժանորդագրության բլանկ**

Անուն՝ \_\_\_\_\_

Ազգանուն՝ \_\_\_\_\_


Առաքման հասցե՝ \_\_\_\_\_

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ \_\_\_\_\_

Հեռ.՝ (060) 490049

0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

**ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ**



Շիրակ	-15 - 20 -2 + 2	Արարատ	0 - 5 +2 + 4
Կոտայքի լեռներ	-10 - 15 -2 + 2	Արմավիր	-2 - 5 +2 + 4
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3	Վայոց ձորի լեռներ	-6 - 9 +2 + 4
Գեղարքունիք	-8 - 11 -2 + 1	Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +2 + 5
Լոռի	-4 - 8 +7 + 10	Սյունիքի հովիտներ	0 + 3 +8 + 10
Տավուշ	0 - 2 +3 + 6	Սյունիքի նախալեռներ	0 + 3 +7 + 10
Արագածոտնի լեռներ	-15 - 18 -2 + 2	ԼՂՀ	-2 - 6 +8 + 10
Արագածոտնի նախալեռներ	-5 - 9 -2 + 2	Երեւան	-1 - 3 0 + 2

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ  
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22<sup>ա</sup>/3, հեռ՝ 010 54-64-23  
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03U089086  
տրված է 24.11.2010  
Ստորագրված է տպագրության 13.1.2025  
Տպաքանակ՝ 3968

Գլխավոր խմբագիր՝  
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում  
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրայնապատվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»: